

ւերակները վարած՝ բանակցութիւնները ժամանակ: 1918-23թ. աշխատեց Հ. Հ. Փարիզի Պատերազմութեան մէջ: 1925 թ. մասնակցեց Հ. Յ. Դ. 10-րդ Ընդհ. Ժողովին: Ապա մեկնեց Հայաստան, ուր մինչեւ մահ քարտուղար եղաւ Կարմիր Սաչի Կենտրոնական վարչութեան մէջ:

Միաժամանակ, ուր եւ լինում էր, Քոչարեանը կատարում էր հասարակական զանազան ուրիշ պաշտօններ — հոգաբարձու, թատերական ընկերութեան վարչութեան անդամ, անդամ բաղմաթիւ մըշակութային կազմակերպութիւնների եւ ընկերութիւնների, յաճախ, քարտուղարի, հաշւապահի կամ զանձապահի զերում: Նա ամէն տեղ յարգւած ու սիրւած անձ էր: Բոլորի գոնեւրը բաց էին նրա առաջ: Նրա սիրտն էլ բաց էր ամենքի առջեւ: Մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, տղամարդկանց թէ կանանց շրջանում Յակոբ Քոչարեանը տան մարդ էր, սիրելի հիւր, բարեկամ կամ ընկեր՝ նւիրւած եւ անկաշառ:

Յ. Քոչարեանը կարեւոր տեղ ունեցաւ եւ գրական — լրագրական աշխատանքի ընդառառում: Լաւ լեզւագէտ — ազատ խօսում ու գրում էր ռուսերէն ու Ֆրանսերէն, տիրում էր անգլիերէնի ու գերմաներէնի — Քոչարեանը ունի արժէքաւոր թարգմանական գործեր: Նրա գրչի տակից է գուրս եկել, օրինակ, Հ. Իրսէնի «Կառուցանող Սոնէտ» դրամայի, ինչպէս նաեւ մի քանի ուրիշ թատերգութիւնների թարգմանութիւնը: Նա ունի հայերէն թերթերում բաղմաթիւ յօդւածներ հայկական հարցին կամ հայ մշակոյթի զանազան երեւոյթներին նւիրւած, մեծ մասամբ Յ. Ք. ստորագրութեամբ:

Զարմանալի համեստ, իր անձը առաջ չմղող, իր մասին խօսք չսիրող, բայց հմուտ ու զարգացած, հետաքրքրական դէմք էր Յ. Քոչարեանը: Այդ անսահման համեստութեան պէտք է վերագրել եւ նրա մահւան բոլորովին չնկատւած անցնելը: Թող գէթ այս տողերը յարգանքի արտայայտութիւն լինեն սիրելի Յակոբի թանգազին յիշատակին:

IV

Վ. Դ. ՂՈՐՂԱՆՆԱՆ

Մայիս 24-ին Երեւանում վախճանւել է պրոֆ. Վ. Ղորղանեանը — հմուտ երաժշտական քննադատ — պատմագիր եւ արւեստի վաստակաւոր գործիչ: Մնւել էր 1865 թ. Թիֆլիսում: Աւարտել էր Թիֆլիսի ռէալական դպրոցը, ապա՝ Պետրբուրգի Ինժեներական

բարձրագոյն զպրոցը: Երաժշտական կրթութիւնը ստացել էր Բերլինի համալսարանում: Շնորհալի դաշնակահար էր եւ երգահան: Փայլուն քննադատ էր եւ երաժշտութեան տեսաբան: Ունի մի շարք արժէքաւոր երկեր՝ Բեթհովէնի, Մոցարտի, Վերտիի մասին: Բեթհովէնի մասին հեղինակած նրա 1000 էջոց ուսումնասիրութիւնը նրան տւեց եւրոպական համբաւ: Հրատարակել է նաեւ բազմաթիւ յօդածներ ուսական եւ կովկասեան երաժշտութեան մասին. ի միջի ալլոց՝ «Կովկասեան երաժշտութիւն» գրքոյկը:

Սորհրդայնացումից յետոյ, Ղորղանեանը, չկամենալով գործունենալ բոլշեւիկներէ հետ, տարագրւեց արտասահման եւ երկար ժամանակ ապրեց Փարիզում: Բոլշեւիկները զբաւեցին նրա հարուստ գրադարանը եւ արժէքաւոր պատմական նիւթերի հաւաքածոները, որոնց մէջ կային եզակի վաւերագրեր: Սրանից 6-7 տարի առաջ, նա վերադարձաւ Կովկաս, հաստատուեց Երեւանում եւ նւիրեց իր մասնագիտութեան՝ ուսուցչական եւ դրական գործունէութեան, ալլել դասաւորեց իր «գիւան»-ի նիւթերը: Գրի է առել նաեւ իր յուշերը, որոնք դեռ անտիպ են: Այդտեղ նա խօսում է, ի միջի ալլոց, Չայկովսկու, Ռուբինշտէյնի եւ Վերտիի մասին, որոնց հետ մտերիմ ծանօթ էր:

V

ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

Յուլիսի առաջին կէսին, Ռումանիայի Ֆոքշան քաղաքում, 80 ամեայ հասակում, մեռաւ Մանուէլ Միրախորեանը: Հանգուցեալը վանեցի էր, Սրբիմեանի շնչի տակ դաստիարակւած կրթական ու գրական գործիչ: 1870ական թւականներին ուսուցչական պաշտօն վարելով դաւառում եւ պտտելով հայկական շրջանները՝ Միրախորեանը հրատարակեց իր երեք հատորնոց «Ուղեգրութիւն ի հայտնակ գաւառս», որ Գ. Սրբանձտեանցի ուղեգրութիւնների բնոյթը ունի, թէեւ ոչ նրանց գիտական – բանասիրական բարձր արժէքը: 90ական թւականներին Միրախորեանը պանտիպեց արտասահման եւ մի ժամանակ ուսուցչութիւն արաւ Ռումանի, ապա Ֆոքշանի ազգային վարժարաններում. միաժամանակ թղթակցում էր արտասահմանի հայ թերթերին, գլխաւորապէս Մ. Փորթուզալեանի «Արմենիա»-ին: Գրում էր Մ. Կ. Միրախորեան կամ Մ. Կ. Մ. ստորագրութեամբ: Ունի նաեւ անտիպ գրած քներ ուսմանահայ գաղութի մասին: Իր կեանքի վերջին տասնամեակներին բոլորովին քաշւած էր ազգային – հասարակական կեանքից: